



ԺՆԵՎԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՕՇՈՒՄԸ

Սույն թվի սեպտեմբերի 14-ին, Խաչվերացի կիրակի օրը, հանդիսավոր իրադրության մեջ տեղի ունեցավ Ժնևի նորակառուց հայկական եկեղեցու օծման սրբազնի արարողությունը։ Օծման հախորդ օրը, շաբաթ երեկոյան ժամը 6-ին, գեղակերտ եկեղեցու մուտքի դռան առաջ կատարվեց Դումբացերի ալիանդական արարողությունը ձեռամբ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ տ. Անդրովիկ արքեպ. Մանուկյանի և ներկայությամբ տ. Տիրան արքեպ. Ներսուանի, տ. Պատրիարք Թոմայանի, տ. Գյուտ ծ. Վրդ. Նազարյանի և տ. Ներսուան ծ. Վրդ. Պողապալյանի։ Ծառ սրտառուց և խորհրդավոր էր այն պահը, երբ հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները ծնկի եկած մուտքի փակ դռան առջև՝ իրենց սրտառուզ աղերսն էին ուղղում Տիրոջը։ «Քա՞ն մեզ, Տէր, զդուն ողորմութեան»։ Եվ ահա դուները բացվեցին, և եկեղեցականներն ու հավատացյալ ժողովրդի բազմությունը հանդիսավորապես մուտք գործեց ժոմկալորեն զարդարված նորակառուց եկեղեցու ներս, որի սրբազն կամարների տակ կատարվեց Կիրականի երեկոյան ժամերգությունը։

Հետևալ օրը Անդրովիկ արքազնի կողմից եկեղեցում առաջին անգամ մատուցվեց ս. պատարագ, որին ներկա էին օրթոդոքս,

կաթոլիկ և բողոքական քույր եկեղեցիների հոգևոր ներկայացուցիչներ, Եկեղեցիների նամաշխարհային խորհրդի կողմից ուղարկված պաշտոնական ներկայացուցիչներ, Ծվեցարիայի պետական բարձրաստիճան անձնավորություններ, ինչպես նաև Եվրոպայի զանազան քաղաքներից եկած հայ հավատացյալների մի հոծ բազմություն։ Պատարագի ընթացքում կատարվեց եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը, որն անշնչելի ու խոր տպավորություն բրոդեց թե՛ հայ և թե՛ օտար հավատացյալների վրա։ Օծումից հետո հայրապետական պատվիրակ սրբազնը ֆրանսերեն լեզվով կարդաց մի գեղեցիկ ու տպավորիչ ճառ, որի մեջ ամփոփ գծերով ներկայացրեց 1915 թվականից ի վեր հայ ժողովրդի ճակատագիրը արտասահմանում, ազգապահպան մաս համար նրա միաձարձնակ պայքարը, նրա ազգաշենք ու եկեղեցաշենք գործունեությունը, որի խոտուն վկայություններն են հանդիսանում սփյուռքի զանազան վայրերում կառուցված հայկական բազմաթիվ դպրոցներն ու եկեղեցիները, հոգևոր ու ազգային այդ զուգա օջախները, որոնց շնորհիվ նա կարողացավ իր կրոնական և հայեցի նկարագիրը պահպանել և հավատարին մնալ իր քրիստոնեական հավատքին և իր կրոնական կենտրոն և Էջմիածնին։ «Եկե-

ղեցիի մը շինության ու օծման հանդիսությունը,—ասաց իր քարոզում սրբազնը,—հիշատակելի դեպք մըն է հայուն համար, վասնզի իր եկեղեցիին մեջ է, որ ան կգտնեն իր կրոնական զգացմունքներուն քավարա-

Հավարտ և պատարագի Ժնևի «Հôtel de la Paix»-ի ընդարձակ սրամում, ի պատիվ օտար հրավիրյալների, կազմակերպվեց ճոխ ընդունելություն, որի ընթացքուն պաշտոնական ճառերով հանդիս եկան.



Ժնևի հայոց և Հակոբ Շնորհակառուց եկեղեցին

րությունը, այլ նաև իր հայսահայրերու հավատքին և իր ամբողջ պատմության հաղորդությունը: Այսօր, շնորհիվ Զվիշերիական իշխանության բարյացակամության, որու գեղեցիկ երկրին մեջ հյուրընկավաճ է հայ գաղութ մը, պատմական Ժնևի լիճի ափերուն վրա կրարձրանա հայկական ավանդական ճարտարապետությամբ այս փոքրիկ ու սիրուն եկեղեցին, որ կոչված է ըլլալու հավաքական օջախ մը հավատքի, հույսի և սիրո, զվիշերա-հայկական բարեկամության հաստատուն խորհրդանշան մը, ինչպես նաև էկումենիկ շարժման այս կերպնեն մեջ համագործակցության, հավատքի և սիրո կապ մը՝ քրիստոնյա բոլոր քույր եկեղեցիներու միջև: Այնուհետև կարդացվեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կոնդակը՝ ուղղված եկեղեցու բարերար, Ժնևաքննակ պր. Հակոբ Շնորհակառին, և Սերովք պրքազանը նրա կուրօքք զարդարեց և Գրիգոր Լուսավորչի Ա կարգի աղամանդակուր շքանշանով:

Ժնևի պետական իշխանության, ինչպես նաև քույր եկեղեցիների ներկայացուցիչները: Ելույթ ունեցավ նաև բարերար պր. Հակոբ Շնորհակառը, որն իր սրտագին շնորհակալությունն ու երախտագիտական զգացումներն արտահայտեց Վեհափառ Հայութակենի կողմից շնորհված բարձր պարգևի համար և գոհունակություն հայտնեց, որ կարողացել է օգտակար լինել հայ եկեղեցուն ու հայ ժողովրդին: Ընդունելության վերջում Սերովք արքեպիսկոպոսը խոսք վերցնելով՝ կրկին շնորհակալություն հայտնեց շվեյցարացի ազնիվ և հյուրընկալ ժողովրդին, գնահատեց եկեղեցու բարերարի ժեատը՝ շեշտելով նաև Ժնևի հայ գաղութի հայսազան պր. Շաոլ Փիհապույանի և պր. Կրոսիկ Փափազյանի ներդրած անհոն շանքերը եկեղեցու շինության գործում:

Նույն օրը երեկոյան «Hôtel International»-ի շքել սրամում ճաշկերույթ տրվեց ի պատիվ Ժնևի հավատացյալ հայ համայնքի:

ներկայացուցիչների: Ծաշկերությում խանդավառ երություններ ունեցան Տիգրան Պողոսյան, Ներսոսյանը, Պատկ արքեպ. Թոումանյանը՝ ուրիշներ: Փակման խոր ասաց Անդրանիկ Արքեպիսկոպոսը՝ Կրիշն անգամ Վեհափառ

նախագիծը կազմած և մեծ վարպետությամբ ու ճաշակով այն իրազործած է փարիզահայ տաղանդավոր և հմուտ ճարտարապետ պր. Էդուարդ Ռոթուզյանը, որին իրենց թանկագին աջակցությունն են բերել շվեյցարացի



Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանի տվյալները

Հայրապետի օրինությունները հայտնելով մեծարգություններին, որ գեղեցիկ մտածումն էր ունեցել աղոթքի մի տուն կանգնեցնել Ժնևի նման քաղաքական մի կենտրոնում, որպեսզի տևապես անմար մեռ մեր ժողովրդի հավատքի շահը և զգալի լինի հրա ներկայությունը ապա քաղաքում:

Ժնևի ս. Հակոբ հայկական եկեղեցու

երկու հայտնի ճարտարապետներ: Հայ Բին եկեղեցական ճարտարապետության ամենահատկանիշական գծերը ներդաշնակորեն համարված և դրոշմված են այս զմայլելի կառուցի վրա: Ծենքի վերևի մասը նախատեսված է օգտագործել իբրև սրահ և հայ եկեղեցական արվեստի ու մշակույթի թանգարան:

